

*Երուսաղէմի Ս. Յակոբի մատենադարանին ձեռագրէ մը*

Նկարը ցոյց կու տայ իբր թէ վիշապ մը, որուն ոչ-հայկական հանգամանքը նկատելի է և պարզապէս օձ մը կը ներկայացնէ որ մեծ նմանութիւն ունի յաջորդ նկարին մէջ ցոյց տրուած լուսանցազարդին օձին հետ, առնուած նոյնպէս Երուսաղէմի ձեռագրատան Աւետարանէ մը։ Նշանակելի է որ երկուքն ալ ունին գալար մը կամ կապ մը պոչերնուն վրայ, հաւանաբար ոչ-հայկական աւանդութեան մը պատճառաւ, քանի որ օձերը հայկական չեն։